# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/8-6

ք.Երևան «12» « 12 » 2019թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, (գործելով Հայաստանի Հանրապետության անունից), ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Արտակ Ղազարյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Գնորդ»), մի կողմից, և «Պրեմիում ֆուդ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Համբարձումյանի, (այսուհետ՝ «Վաճառող»), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 07.05.2019թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/8-6 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5 և 8.9 կետերը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով, որ ՀՀ ԱՆ «Արմավիր» և «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկները 2019թ, հոկտեմբերի 15-ից անցել են սննդի հատկացման նոր համակարգի՝ պատրաստի սննդի ծեռքբերման ծառայության, ուստի անհրաժեշտություն է առաջացել նվազեցնել մատակարարվող սննդամթերքի քանակները: Հաշվի առնելով նշվածը, Գնորդի նախաձեռնությամբ կողմերը որոշեցին՝ Պայմանագրի N1 հավելվածով՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ով, նախատեսված՝ սննդամթերքի քանակները նվազեցնել, մասնավորապես՝

1) 17000 կգ «մակարոն» ապրանքատեսակի քանակը նվազեցնել 5000 կգ-ով, որի գումարը կազմում է՝ 1299950 (մեկ միլիոն երկու հարյուր իննսունինը հազար ինը հարյուր հիսուն) ՀՀ դրամ,

Հաշվի առնելով այն համգամանքը, որ նվազեցվող քանակների չափով վերացել է «մակարոն» ապրանքատեսակի գնման պահանջը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, կատարել ֆինանսական հատկացումների նվազեցում և այդ գումարի չափով նվազեցնել Պայմանագրի գինը:

1.2 Պայմանագրի 3.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Պայմանագրի գինը՝ կազմում 3119880 (երեք միլիոն հարյուր տասնինը հազար ութ հարյուր ութսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը»:

1.3 Պայմանագրի N1 հավելվածի՝ «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ի, 11-րդ, չափաբաժնի աղյուսակը հաստատել նոր խմբագրությամբ՝ առանց տեխնիկական բնութագրի սյունակի (որը մնում է ամփոփոխ):

1.4 Պայմանագրի N2 հավելվածը՝ «վճարման ժամանակացույց»-ը, հաստատել նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N2-ի:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/8-6 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և N1, N2 հավելվածները կազմված են 4 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, համաձայնագրի N1 հավելվածը, համարվում են սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ Քրեակատարողական
ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց -63
ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայություն՝
Ա.Ղազարյան

---

/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՊՐԵՄԻՈՒՄ ՖՈՒԴ» ՍՊԸ
Հասցե: Արշակունյաց 127/21,
Երևան 0039
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 15700 31027020100
ՀՎՀՀ 02273477

Տնօրեն՝
Ա. Համբարձումյան

---

/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 1
«12» «12» 2019 թ. կնքված
N 1 համաձայնագրի
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/8-6 ծածկագրով պայմանագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | մատակարարման | | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | արտադրողը և ծագման երկիրը | չափման միավորը | միավորի գինը /ՀՀ դրամ/ | ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ | ընդհանուր քանակը | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| 11 | 15851100/2 | Մակարոն | «Պրեմիում ֆուդ» ՍՊԸ ՀՀ | կգ | 259,99 | 3119880 | 12000 | ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության հիմնարկներ` համաձայն բաշխման ցուցակի | 6000 | 3-րդ եռամսյակ |
| | | | | | | | | | 6000 | 4-րդ եռամսյակ |

*Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 15-ը:*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ Քրեակատարողական
ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայություն`
Ա.Ղազարյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՊՐԵՄԻՈՒՄ ՖՈՒԴ» ՍՊԸ
Հասցե: Արշակունյաց 127/21,
Երևան 0039
Բանկ` Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 15700 31027020100
ՀՎՀՀ 02273477

Տնօրեն`
Ա. Համբարձումյան

---------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված N 2
«12» « 12 » 2019 թ. կնքված
N 1 համաձայնագրի
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/8-6 ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | ընդամենը |
| 11 | 15851100/2 | Մակարոն | - | - | 1559940 | 3119880 | 3119880 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ԳՆՈՐԴ**
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739
ՔԿ ծառայության՝
Ա.Ղազարյան
---------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

**ՎԱՃԱՌՈՂ**
«ՊՐԵՄԻՈՒՄ ՖՈՒԴ» ՍՊԸ
Հասցե: Արշակունյաց 127/21,
Երևան 0039
Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
Հ/Հ 15700 31027020100
ՀՎՀՀ 02273477
Տնօրեն՝
Ա. Համբարձումյան
---------------------
/ստորագրություն/
Կ.Տ.